



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

FINANCIAL SECTOR
DEEPENING PROJECT

ԻՆՉՊԵՐՍ ՎԱՐԿ ՎԵՐՑՆԵԼ

Ի՞նչ է պետք իմանալ
վարկ
վերցնելու
համար

Հանրապետություն 1880-1972

20000 ՀԱՅԿԱՏԻՎԱԿԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ձեռնարկի մասին

Տարաբնույթ ֆինանսական գործարքները դարձել են անհատ մարդկանց և կազմակերպությունների ամենօրյա գործունեության անբաժան մասը:

Վարկային միջոցներով ոչ կանխիկ վճարումները, ապառիկ գնումները, հիփոթեքով բնակարանի ձեռք բերումը և այլ գործարքներ օգնում են մարդկանց լուծել առօրյա և երկարաժամկետ ֆինանսական խնդիրներ:

Այսօր շատերը կխոստովանեն, որ առանց վարկ վերցնելու հնարավոր չէր լինի գնել այն կամ այն իրը, սկսել կամ ընդլայնել բիզնեսը կամ օգտվել որևէ ծառայությունից:

Ինչպես ցանկացած ապրանք կամ ծառայություն գնելիս, վարկի դեպքում նույնպես մենք ցանկանում ենք համոզված լինել, որ ընտրել ենք լավագույն մատչելի տարբերակը, ավել գումար չենք վճարել և ավելորդ գլխացավանք չենք ունենալու վարկի մարման ողջ շրջանում:

Շուկայում առաջարկվող բազմաթիվ տարբերակներն ու գովազդային բառախաղերն էլ ավելի են դժվարացնում լավագույն տարբերակի ընտրությունը: Բոլոր բանկերն էլ առաջարկում են «Լավագույն Տարբերակը», «Ամենացածր Տոկոսները» և «Ամենահարմարավետ պայմանները»:

Այս իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու համար ամենևին էլ պետք չէ լինել ֆինանսիստ կամ տնտեսագետ: Դուք պարզապես պետք է իմանաք այն հիմնական սկզբունքները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վարկատուներին դիմելու և Ձեզ անհրաժեշտ վարկը ստանալու համար:

Սույն ձեռնարկում դուք չեք գտնի, թե մասնավորապես, որ բանկն է առաջարկում լավագույն տոկոսադրույքներն ու պայմանները: Ավելին՝ նման բանկ միգուցե Հայաստանում չկա: Չէ որ բանկերը, տոկոսադրույքները և պայմանները, կարող են օրեցօր փոփոխվել, ինչպես և ձեր կարիքները:

Կարդալով այս ձեռնարկը Ձեզ պարզ կդառնա թե որոնք են այն հիմնական հարցերը, սկզբունքներն ու մանրուքները, որոնց պետք է ուշադրություն դարձնել ճիշտ կողմնորոշվելու և ամենաընդունելի ու հարմար վարկավորման տարբերակը գտնելու համար:

Սույն ձեռնարկը մշակվել է ԱՄՆ ՄՁԳ ՀՀ Ֆինանսական ոլորտի զարգացման ծրագրի կողմից և նպատակաուղղված է նպաստելու բնակչության լայն շրջանների տեղեկացվածության և գրագիտության բարձրացմանը ֆինանսական ոլորտում մատուցվող վարկային ծառայությունների վերաբերյալ:

Ձեռնարկում տեղ գտած տեղեկատվությունը համընդհանուր բնույթի է և չի կարող պարտադիր լինել որևէ կոնկրետ դեպքի համար: Այն կիրառելու համար խորհրդակցեք համապատասխան մասնագետների հետ:

Բովանդակություն

1. Ի՞նչ և ինչու՞ համար է փոխառությունը կամ վարկը	4
2. Վարկ կամ փոխառություն. Որո՞նք են տարբերությունները	5
3. Որոնք են վարկի հիմնական տեսակները.....	5
4. Ինչո՞վ է պայմանավորվում վարկի գումարի չափը	6
A. Անհրաժեշտ վարկի նպատակը և տեսակը՝ ինչպե՞ս ճշտել այն	7
B. Ի՞նչ է վարկունակությունը՝ ինչպե՞ս գնահատել Ձեր վարկունակությունը.....	7
C. Ի՞նչ է վարկի ապահովվածությունը՝ ինչպե՞ս այն իրականացնել	11
D. Վարկի կանխավճարային գումարը՝ արդյոք պե՞տք է այն և ո՞ր դեպքերում.....	12
E. Ինչպե՞ս է վարկի ժամկետը որոշում վարկի գումարի չափը.....	13
5. Վարկի արժեքը՝ ինչպե՞ս այն գնահատել	13
A. Վարկի ստացման համար կատարվելիք ծախսերը և վճարները.....	14
B. Վարկի տարեկան տոկոսադրույքը	14
C. Վարկի սպասարկման վճարները.....	15
D. Իրական (համեմատական) տոկոսադրույք՝ ի՞նչ է այն և ինչպե՞ս հաշվել	15
6. Վարկի մարման սխեմաներ. Ինչպե՞ս հաշվարկել և վճարել տոկոսավճարները	16
7. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ վարկ ստանալու համար	18
8. Ի՞նչ է վարկային պայմանագիրը և ինչպե՞ս այն կարդալ	20
A. Որո՞նք են Ձեր իրավունքները որպես վարկառու	20
B. Պատրաստ եք կատարել Ձեր պարտականությունները	21
9. Վարկերի մարման որոշ առանձնահատկություններ.....	22
A. Կարելի՞ է արդյոք վաղաժամ մարել վարկը	22
B. Ի՞նչ է ժամկետանց վարկը և ինչպիսի՞ն են ժամկետանց վարկի մարման տոկոսադրույքերը	22
10. Ի՞նչ է Ձեզ սպասում վարկի չմարման դեպքերում	23
11. Ի՞նչ անել եթե Ձեզ մերժել են վարկավորել	23
12. Ինչպե՞ս ընտրել վարկատու կազմակերպություն և աշխատել նրա հետ	24
Տերմիններ/Glossary	26
Հավելվածներ	27
A. 77 Վարկատու կազմակերպությունների ցանկ	27
B. Վարկի տրամադրման պայմանների և պահանջների համեմատման աղյուսակ. 29	

Ներդիրներ

Ներդիր 1. Ի՞նչ է վարկային բյուրոն

Ներդիր 2. Վարկի արժույթը՝ դրամ, թե՞ ...

Հապավումներ և պայմանական նշանակումներ

ՀՀ ԿԲ	–	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ
ՍՊԸ	–	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՓԲԸ	–	Փակ բաժնետիրական ընկերություն
ՓԲԸ	–	Բաց բաժնետիրական ընկերություն
ՈւՎԿ	–	Ունիվերսալ վարկային կազմակերպություն



– նշանի առկայության դեպքում այլ գույնով նշագրված տերմիններին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ ուղեցույցի վերջում ներկայացված բացատրական բառարանից



– նշանը ընդգծում է նշագրված տեքստի կարևորությունը



– նշանի առկայության դեպքում ներկայացված ինֆորմացիայի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ նշված Ինտերնետային կայքից

Ինչպե՞ս վարկ վերցնել

Ի՞նչ է պետք իմանալ վարկ վերցնելու համար

1. Ի՞նչ և ինչու՞ համար է փոխառությունը կամ վարկը

Այս հարցի պատասխանը շատ դեպքերում ակնհայտ է մեզանից շատերի համար: **Նպատակները և կարիքները կարող են շատ տարբեր լինել:** Սակայն եկեք թվարկենք բոլորիս հայտնի մի քանի պատճառներ, որոնք կարելի է շարունակել և անվերջ ընդլայնել, ելնելով Ձեր կարիքների առանձնահատկություններից.

- ունեք նոր բիզնես մտահաղացում, սակայն չունեք բավարար գումար այն իրագործելու համար....
 - ունեք դրամական միջոցներ, սակայն դրանք բավարար չեն անհրաժեշտ խոշոր գնումներ կատարելու համար....
 - ունեք կայուն եկամուտ, սակայն անհրաժեշտ խոշոր գնումը կատարելու համար պետք է դեռևս երկար ժամանակ կուտակեք խնայողություններ....
 - ցանկանում եք ներդրում կատարել Ձեր երեխայի կրթության և ապագայի մեջ....
- Դիմե՛ք փոխառություն և/կամ վարկ ստանալու համար:

Ձեր խնդիրները լուծեք այսօր, իսկ դրանց համար վճարեք ապագայում՝ մաս մաս...

Գաղտնիք չէ, սակայն, որ միայն կարիք կամ նպատակ ունենալը դեռ չի երաշխավորում, որ ձեզ այդ վարկը կամ փոխառությունը կտրվի: Ձեզ նաև անհրաժեշտ է համապատասխանել որոշակի սկզբունքների:

Այդ սկզբունքներն առավել հեշտ է հասկանալ և ընկալել, եթե մի պահ պատկերացնեք որ վարկատուն հենց Դուք եք: Դուք որևէ մակիմ պարտքով խոշոր գումար տալիս իհարկե կփորձեք համոզվել, որ՝

- Գումարը կվերադարձվի,
- Գումարը կվերադարձվի որոշակի ժամանակահատվածում (Ցանկալի է Ձեր կյանքի ընթացքում)
- Գումարից բացի Ձեզ նաև կվճարեն տոկոսագումար (այլապես կարելի է գումարից գումար վաստակել՝ ներդնելով այն օրինակ բանկում)
- Կարող եք գումարը չվերադարձվելու դեպքում փոխհատուցում ստանալ համարժեք գույքի տեսքով
- Այդ գումարը աննպատակ չի ծախսվի, փոշիանա (թեկուզև չմարելու դեպքում փոխհատուցումը ապահովվելու համար)

Վերը թվարկված ձեր այս բոլոր ցանկությունները հստակ ամրագրված են Վարկավորման սկզբունքներում:

Վերադարձելության սկզբունքը ենթադրում է, որ վերցված վարկը կամ փոխառությունը պետք է պարտադիր կերպով վերադարձնեք **վարկատուին (փոխատուին)** որոշված ժամկետներում:

Ժամկետայնության սկզբունքը ենթադրում է, որ վարկը կամ փոխառությունը պետք է վերադարձնեք փոխատուին Ձեր և վարկատուի միջև համաձայնեցված և փոխառության պայմանագրում նշված հստակ ժամկետներում:

Չատուցելիության սկզբունքը ենթադրում է, որ վերցված վարկի կամ փոխառության դիմաց պետք է գումարի օգտագործման համար վճարեք որոշակի տոկոսավճար: Տոկոսավճարի մեծությունը համաձայնեցվում է կողմերի միջև և նշվում Ձեր վարկային պայմանագրում; **Կարևոր է իմանալ, որ տոկոսավճարը չի կարող լինել ավելի մեծ, քան Կենտրոնական Բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային**



Փոխառության և/կամ վարկի տոկոսի չափը չի կարող գերազանցել 33 կԲ կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

դրույքի կրկնապատիկը: Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կարող եք գտնել ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում՝ <http://www.cba.am/>¹:



Ապահովվածության սկզբունքը կիրառվում է վարկային պարտականությունների չկատարման դեպքերի համար: Փոխատուն կարող է ապահովել իր վարկի վերադարձելիությունը, օրինակ գրավի կամ այլ ֆինանսական երաշխիքների միջոցով:

Վարկի նպատակային լինելու սկզբունքը ենթադրում է փոխառուի կողմից վերցված միջոցների նպատակային օգտագործում և ամրագրվում է վարկի պայմանագրում:

Ցանկացած փոխառություն վերցնելիս ենթադրվում է սկզբունքներից և պայմաններից յուրաքանչյուրի կատարումը: Սակայն յուրաքանչյուր վարկի կամ փոխառության համար դրանք պետք է համաձայնեցվեն և նշվեն պայմանագրում:

2. Վարկ կամ փոխառություն. Որո՞նք են տարբերությունները

Ամեն վարկ փոխառություն է, բայց ամեն փոխառություն չէ, որ վարկ է:

Այս ձեռնարկի շրջանակներում մենք դիտարկում ենք միայն վարկ հասկացությունը, որը բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից տրամադրվող ցանկացած դրամային փոխառություն է:

Փոխառություն հասկացությունն ունի ավելի լայն կիրառություն և ներառում է ոչ միայն դրամային փոխառությունը (վարկը) այլև գույքային փոխառությունը: Բացի այդ փոխառություն հնարավոր է ստանալ ոչ միայն բանկից, այլև ցանկացած այլ կազմակերպությունից և նույնիսկ անհատից:

3. Որոնք են վարկի հիմնական տեսակները

Ճիշտ վարկ ընտրելու համար անհրաժեշտ է իմանալ ինչ տեսակի վարկեր կան, որ տեսակի վարկը առավել արդյունավետ կծառայի ձեր նպատակներին:



Վարկային շուկայում առկա բազմազանության մեջ ձեզ անհրաժեշտ վարկի տեսակը որոշելու համար պետք է մտածել երեք տեսակի, առավել տարածված դասակարգման մասին՝ **ժամկետի, նպատակի և Արժույթի**

Ըստ վարկի ժամկետայնության՝

- **Կարճաժամկետ** (սովորաբար մինչև 1 տարի մարման ժամկետով),
- **Միջնաժամկետ** (սովորաբար 1-3 տարի մարման ժամկետով) և
- **Երկարաժամկետ** (սովորաբար 3-ից ավել տարի մարման ժամկետով):

¹ 01.01.2008թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կազմել է 11%:

Վարկերը
դասակարգվում են
ըստ ժամկետի,
օգտագործման
նպատակի,
արժույթի և այլն...

Ըստ վարկի նպատակի՝

- **Բիզնես կամ առևտրային վարկերը** տրամադրվում են տնտեսական գործունեության իրականացման, այդ թվում նաև արտադրության կազմակերպման, առևտրի, ծառայությունների մատուցման, բիզնեսի ընդլայնման և զարգացման, նպատակով տրվող վարկեր,
- **Գյուղատնտեսական վարկերը** տրամադրվում են գյուղատնտեսական արտադրության կազմակերպման կամ գյուղատնտեսական հունքի վերամշակման կազմակերպման նպատակով,
- **Սպառողական վարկերի** նպատակն է օգնել ապառիկ եղանակով ապրանքների ձեռքբերմանը,
- **Հիփոթեքային/վերանորոգման վարկերի** օգնությամբ կարող եք գնել կամ վերանորոգել ձեր բնակարանը կամ առանձնատունը,
- **Ավտովարկերը** ավտոմեքենա գնելու նպատակով տրամադրվող վարկերն են,
- **Կրթական վարկերը** տրամադրվում են կրության վարձի վճարման նպատակով,
- **Լոնքարդային վարկեր՝** արագ իրացվելի գրավի դիմաց (ոսկու, դրամական միջոցների եւ այլն), որոշակի անձնական նպատակների համար ֆիզիկական անձանց տրամադրվող վարկեր,
- **Կրեդիտային քարտ՝** ընթացիկ ծախսերի իրականացման համար վարկային քարտերի միջոցով տրամադրվող վարկեր,
- **Լիզինգը** միջին կամ երկար ժամկետայնության ֆինանսական գործիք է, որը օգտագործվում է մեխանիզմների, սարքավորումների, ավտոմեքենաների և/կամ գույքի գնման նպատակով:

Ըստ վարկի արժույթի՝

- **Դրամային՝** Հայկական դրամով տրամադրվող վարկեր,
- **Արտարժույթային՝** այլ երկրների արժույթով տրամադրվող վարկեր (ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի և այլն):

4. Ինչո՞վ է պայմանավորվում վարկի գումարի չափը

Վարկատույի կողմից մեզ տրամադրվող վարկի գումարի չափը պայմանավորող և սահմանափակող գործոնները տարբեր են յուրաքանչյուր դեպքի համար: Ընդհանուր առմամբ այդ գործոնների շարքում կարող են լինել.

- վարկի տեսակը և նպատակը,
- վարկառուի վարկունակությունը,
- վարկի ապահովվածությունը,
- վարկի կանխավճարային գումարը,
- վարկի մարման ժամկետը:

Վարկ տրամադրելիս ցանկացած բանկ կամ վարկային կազակերպություն վարկի գումարի մեծությունը որոշում է հիմնվելով վերոնշյալ գործոնների վրա:



Իսկ այժմ եկեք փորձենք գնահատել այդ գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը Ձեզ անհրաժեշտ վարկի մեծության վրա:

Գնահատեք Ձեզ
անհրաժեշտ վարկի
գումարի չափը ...

A. Անհրաժեշտ վարկի նպատակը և տեսակը՝ ինչպե՞ս ճշտել այն

Ձեզ անհրաժեշտ վարկի տեսակը և գումարի մեծությունը առաջին հերթին կախված են նրանից, թե ի՞նչ նպատակով եք դուք վերցնում այդ վարկը:

Վարկ ստանալու համար որևէ կազմակերպության դիմելիս պետք է գիտակցել, որ եթե Դուք ցանկանում եք վարկի միջոցով գնել նոր բնակարան կամ ավտոմեքենա, սկսել նոր բիզնես կամ սպառել ապրանքներ և ծառայություններ, ապա այդ յուրաքանչյուր նպատակի համար պետք է ընտրել համապատասխան վարկի տեսակ:

Վարկի տեսակի ընտրությունը գործի կեսն է ...

Օրինակ՝ Ենթադրենք, Դուք ունեք փայլուն գործարար մտահղացում և ցանկանում եք հիմնել նոր բիզնես և դրա համար Ձեզ անհրաժեշտ է գնել կամ վարձակալել համապատասխան տարածք, առավել ևս անհրաժեշտ է այն վերանորոգել: Այդ նպատակով Դուք կարող եք դիմել բանկ հիփոթեքային վարկ ձեռք բերելու համար, որի դեպքում Ձեզ անհրաժեշտ կլինի հանդես գալ որպես ֆիզիկական անձ և փորձել հանոգել բանկին որ Դուք վարկունակ եք: Կամ էլ Դուք կարող եք բանկ ներկայացնել Ձեր մտահղացումը բիզնես ծրագրի տեսքով և ամբողջ բիզնեսի կազմակերպման համար ստանալ համապատասխան բիզնես կամ առևտրային վարկ:

Այնպես որ ի սկզբանե պետք է ճշգրտել Ձեր նպատակը և հստակ ձևակերպել այն: Նպատակի և անհրաժեշտ գումարի մեծության որոշումից հետո անհրաժեշտ է տեղեկանալ, թե կոնկրետ Ձեր նպատակին ուղղված ի՞նչ վարկավորում են առաջարկում բանկերը կամ վարկային կազմակերպությունները և կա՞ն արդյոք որևէ գումարային սահմանափակումներ: Եթե չկան կոնկրետ Ձեր խնդրին ուղղված վարկային ծրագրեր, ապա անհրաժեշտ է կամ վերաձևակերպել Ձեր նպատակը, կամ ճշտել, թե ի՞նչ վարկային ծրագրեր կան նմանատիպ այլ խնդիրների ուղղությամբ և, խորհրդակցելով համապատասխան բանկի կամ վարկային կազմակերպության աշխատակիցների հետ, ընտրել Ձեզ համար առավել հարմար վարկի տեսակը:

B. Ի՞նչ է վարկունակությունը՝ ինչպե՞ս գնահատել Ձեր վարկունակությունը

Ցանկացած վարկ տրամադրելիս, լինի դա սպառողական վարկ, կրեդիտ քարտ, թե հիփոթեք, վարկատուն ցանկանում է հանոգվել, որ Դուք ի վիճակի կլինեք վերադարձնել վերցված վարկը, այսինքն, որ Դուք ունեք այդպիսի ցանկություն և կարողություն: Ձեր ՎԱՐԿՈՒՄԿՈՒԹՅՈՒՆԸ հենց այդ ցանկությունն ու կարողությունն են, որոնք վարկատուն գնահատում է ելնելով մի քանի չափանիշներից՝

- Ձեր և/կամ Ձեր ընտանիքի ընթացիկ եկամուտները,
- Ձեր կուտակած միջոցները,
- Ձեր վարկային պատմությունը:

Այս չափանիշներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Դրանցից յուրաքանչյուրի առանձին դիտարկումն ու գնահատումը կօգնի Ձեզ առավել չիշտ օգտագործել ձեր ֆինանսական վիճակը վարկավորման լավագույն տարբերակը գտնելու համար:

i. Ձեր և/կամ Ձեր ընտանիքի եկամուտները

Վերցված վարկի համար պատասխանատվություն կրելու Ձեր կարողությունը առաջին հերթին կախված է Ձեր եկամուտների մեծությունից և կայուն աշխատանք ունենալու հանգամանքից:

Փաստորեն, Ձեր եկամուտներն են պայմանավորում այն գումարի մեծությունը, որը Դուք կկարողանաք յուրաքանչյուր ամիս վճարել վարկի դիմաց հետևապես նաև Ձեզ հասանելի վարկի գումարի չափը:

Համավարկառուներ

Դուք կարող եք նաև վարկ վերցնել համավարկառուի հետ, սովորաբար ընտանիքի անդամի հետ: Այս դեպքում, վարկի գումարի չափը որոշելիս վարկատուն կարող է հաշվի առնել Ձեր ամբողջ ընտանիքի եկամուտը:

Սովորաբար, բանկերի համար ընդունելի է, երբ վարկի դիմաց վճարվելիք ամենամսյա գումարը չի գերազանցում Ձեր «մաքուր» տնօրինվող եկամտի 50%-ը:

Ամուսինները համարվում են համավարկառուներ...

Ո՞ր եկամուտներն է հաշվի առնում վարկատուն

Վարկունակության հաշվարկի համար վարկատուն հաշվի է առնում ոչ թե ցանկացած եկամուտ, այլ միայն կայուն և մշտապես ստացվող եկամուտները՝ աշխատավարձ, տոկոսային եկամուտներ, ռենտա, դիվիդենտներ և այլն:

Վարկատուն կարող է պահանջել նաև եկամուտների կայունությունը և չափը հաստատող փաստաթղթեր՝ աշխատավարձի մասին տեղեկանք, ստացվող դիվիդենտների մասին տեղեկանք ընկերությունից և այլ փաստաթղթեր: Նմանատիպ տեղեկանքները պետք է հաստատված լինեն կազմակերպության ղեկավարի, գլխավոր հաշվապահի և/կամ այլ լիազոր անձի կողմից: Հայաստանում վարկատուները պահանջում են նաև, որ փաստաթուղթը կնքված լինի ընկերության գլխավոր կլոր կնիքով:



Ճիշտ հաշվարկեք Ձեր «մաքուր» տնօրինվող եկամուտը

	Օրինակ Եկամուտ/ծախսեր
Մաքուր եկամուտը հաշվարկելիս պետք է ստացվող կայուն եկամտից հանել Ձեր և Ձեր ընտանիքի հետ կապված բոլոր կայուն ծախսերը, ինչպիսիք են՝	320,000
	-
▪ Կունունակ ծախսեր (միջինացված ամառային և ձմեռային ամիսների համար)	35,000
▪ Սպառողական զամբյուղ (խնամակալության տակ գտնվող բոլոր անդամների համար) 40,000 դրամ 3 անձի համար	120,000
▪ Գույքահարկեր և պետական տուրքեր (բնակարան, ավտոմեքենա)	0
▪ Ապահովագրական վճարներ	0
▪ Այլ վարկային պարտավորություններ	0
▪ Վճարվող ալիմենտներ	0
▪ Այլ մշտական ծախսեր	0
Այս և այլ ծախսեր հանելուց հետո կստանաք ձեր մաքուր տնօրինվող եկամուտը	165,000
Բաժանեք տնօրինվող եկամուտը երկուսի	/2
և կստանաք այն թիվը,	=
որը վարկառուն կօգտագործի, որպես հիմք ձեր վարկի գումարը որոշելու համար, սա այն գումարն է, որը դուք, հանգիստ կարող եք տրամադրել վարկը մարելու համար:	82,500

Աղյուսակ 1. Տրամադրվելիք վարկի գումարի մեծությունը կախված մարման ժամկետից՝ 12% տարեկան տոկոսադրույքի դեպքում

Վարկի և տոկոսադրույքի ամսեկան մարման գումար 82,500 դրամ

Վարկի մարման ժամկետը,	Վարկի հնարավոր գումարի մեծությունը,
2 տարի	1.753.000 դրամ
3 տարի	2.484.000 դրամ
4 տարի	3.133.000 դրամ
5 տարի	3.709.000 դրամ
6 տարի	4.220.000 դրամ
7 տարի	4.674.000 դրամ
8 տարի	5.076.000 դրամ

Այս աղյուսակից պարզ երևում է, որ որքան երկար է մարման ժամկետը այնքան մեծ կլինի տրամադրվելիք վարկի գումարը

Ձեր և/կամ Ձեր ընտանիքի խնայողությունները բանկայում թե բանկում

Ձեր վարկունակության որոշման երկրորդ հիմնական գործոնը Ձեր կուտակած միջոցներն են, այսինքն Ձեր խնայողությունները: Խնայողությունները կարող են ունենալ տարբեր արտահայտություններ՝ բարձի տակ պահվող գումարից մինչև բանկային հաշվին պահվող միջոցները:

Վարկատուի համար, սակայն, «տեսանելի» և, հետևաբար, ընդունելի դարձնելու համար առավել նպատակահարմար է դրանք պահել բանկային հաշվի վրա:

Հիշեք, որ ՀՀ բանկերում ֆիզիկական անձանց ավանդների ապահովությունը երաշխավորվում է ոչ միայն տվյալ բանկի, այլ նաև Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից (*մանրամասները Հիմնադրամի կայքում <http://www.adgf.am/>*):



Վարկ տրամադրելու համար որոշ բանկեր պահանջում են նաև, որ վարկառուն հաշիվ ունենա իրենց բանկում, որպեսզի հնարավոր լինի գնահատել նրա խնայողությունների ծավալները և բանկային հաշվի շարժը (ներդրված և հանված գումարները): Վորոշ բանկեր նույնիսկ վերցվելիք վարկի գումարի չափը կապում են վերջին ամիսներին վարկառույի **հաշվի ամսական միջին գումարային մնացորդի** չափի հետ:

Այլ խնայողություններ խնայողություններ են համարվում նաև

- Ձեր ունեցած արժեթղթերը,
- իրացվելի բաժնեմասերը,
- անտիկվարիատը և
- հազվագյուտ արվեստի գործերը,

սակայն դրանք բանկի կողմից կարող են նաև հաշվի չառնվել վարկի տրամադրման համար: Այդ իսկ պատճառով, վարկ կամ փոխառություն վերցնելու



համար առավել նպատակարմար է խնայողությունների մի մասը պահել բանկային հաշվի վրա:



Առավել հանգամանակից տեղեկատվություն և խորհուրդներ խնայողությունների և ներդրումների մասին կարող եք գտնել «խնայողությունների իրականացման, ֆինանսական միջոցների կուտակման և ներդրումների կատարման հանրամատչելի ուղեցույցում (<http://www.fsdp.am>):

Ձեր վարկային պատմությունը՝ ինչպե՞ս այն ստեղծել և պահպանել

Արդյո՞ք Դուք վստահելի անձ եք որպես վարկառու, կարո՞ղ է արդյոք վարկատուն հանոգված լինել, որ Դուք կկատարեք Ձեր վրա վերցված պարտավորությունները: Այս հարցերի պատասխանը սերտորեն կախված է Ձեր վարկային պատմության հետ, որով նույնպես գնահատվում է Ձեր վարկունակությունը:

Վարկային պատմությունը դա Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը վարկատուներին օգնում են արագ և առավելագույն հիմնավորված գնահատել վարկառուի վարկարժանության աստիճանը:

Ձեր վարկային պատմությունը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ հատուկ վարկային կազմակերպության կողմից, որը կոչվում է **վարկային բյուրո** **Հայաստանում առաջին վարկային բյուրոն հիմնադրվել է 2004թ.-ին՝ ԱԲՈՎ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ (մանրամասները www.acra.am կայքում) :**

Եթե Դուք անցյալում վարկ եք վերցրել կամ այժմ ունեք ընթացիկ վարկ, ապա այդ մասին ինֆորմացիան Ձեզ վարկ տրամադրած բոլոր վարկատուներից հավաքվում և կուտակվում է վարկային բյուրոյում:

Այդ ինֆորմացիան իր մեջ պարունակում է մասնավորապես տեղեկատվություն, թե Դուք ունե՞ք արդյոք վարկի

- մարման ուշացումներ,
- չվճարումներ,
- չմարված վարկեր և
- վարկային պարտականությունների կատարման այլ խախտումներ:

Այս բնույթի ողջ ինֆորմացիայի միջոցով ստեղծվող վարկային պատմության հիման վրա հաճախ հաշվարկվում է նաև Ձեր անհատական վարկարժանությունը: Այս տեղեկատվության հիման վրա վարկատուն որոշում կայացնել Ձեզ վարկ տրամադրելու և վարկի պայմանների վերաբերյալ:

Այդ իսկ պատճառով շատ կարևոր է ունենալ դրական վարկային պատմություն:

Ինչպե՞ս ունենալ դրական վարկային պատմություն

Սկսեք ձևավորել Ձեր վարկային պատմությունը հնարավորինս վաղ և զերծ պահեք այն վերը թվարկված բացասական երևույթներից:

- ✓ Բացեք բանկային հաշիվ և այդ հաշվին կից պատվիրեք կրեդիտային քարտ: Կատարեք կանոնավոր վճարումներ:
- ✓ Սկզբնական շրջանում վերցրեք որևիցե փոքր վարկ (օրինակ՝ կենցաղային տեխնիկա գնելու նպատակով):
- ✓ Վարկ վերցնելուց պարտադիր կերպով նշեք Ձեր դրական վարկային պատմության մասին:
- ✓ Այլ վարկատուից նոր վարկ վերցնելիս դիմեք վարկային բյուրոին և վերցրեք քաղվացք Ձեր վարկային պատմության վերաբերյալ և ներկայացրեք վարկատուին:

Ձեր վարկարժանությունը վարկատուն կարող է գնահատել Ձեր վարկային պատմության միջոցով:

Ստեղծեք և բարելավեք Ձեր վարկային պատմությունը...

Միշտ հիշեք, որ վստահելի և վարկարժանահավատ վարկառուն ցանկալի հաճախորդ է ցանկացած բանկի և վարկային կազմակերպության համար:

Դուք կարող եք բողոքարկել անարդարացի բացասական վարկային պատմությունը դիմելով վարկային բյուրո:

Իսկ եթե Դուք իսկապես ձևավորել եք բացասական վարկային պատմություն՝ ապա Սկսեք վերը նշված քայլերից և բարելավեք Ձեր վարկային պատմությունը

Ստեղծեք և պահպանեք Ձեր վարկային պատմությունը...

C. Ի՞նչ է վարկի ապահովվածությունը՝ ինչպե՞ս այն իրականացնել

Վարկի հնարավոր չվերադարձման դեպքում իրեն առավել ապահով զգալու նպատակով, վարկատուն կարող է պահանջել լրացուցիչ ապահովվածություն:

Վարկատուին հետաքրքրում է, թե Դուք ի՞նչ կարող եք առաջարկել որպես երաշխիք, որի առկայությունից, տեսակից և մեծությունից կարող է կախված լինել թե վարկ տրամադրելու որոշումը, թե վարկի մեծությունը:

Ֆինանսական կազմակերպության համար որպես ապահովվածություն հիմնականում կարող են հանդիսանալ

- գրավը,
- երաշխիքը,
- վստահելի անձանց /ձեռնարկությունների/ երաշխավորությունը, ինչպես նաև
- բիզնես պլանը և
- վարկառուի ֆինանսական վիճակը ներկայացնող այլ միջոցները:

Սովորաբար վարկ տվողի համար գրավի առարկա կարող են հանդիսանալ՝

- անշարժ և շարժական գույքը,
- ձեռնարկության հիմնական և շրջանառու միջոցները,
- թանկարժեք մետաղները,
- իրացվելի արժեթղթերը,
- Ձեր բանկային հաշվում առկա ֆինանսական միջոցները,
- այլ իրացվելի միջոցներ (բանկի համաձայնությամբ):

Եթե Դուք վարկի վերադարձման ապահովվածության համար որպես երաշխիք օգտագործում եք գրավը, ապա պետք է նաև հիշեք, որ վարկի մեծությունը անմիջականորեն կախված է գրավի գնահատված արժեքից, որը կարող է տարբերվել գրավի շուկայական գնից: Ընդ որում, բանկը որոշում է վարկի մեծությունը որպես գրավի գնահատված արժեքի տոկոսային մաս:

Օրինակ՝ 10մլն. դրամ գնահատված բնակարանի և բավարար եկամուտի դեպքում վարկատուն կարող է տրամադրել վարկ բնակարանի արժեքի **70%-ի չափով**, այսինքն **7 մլն դրամ**: Մնացյալ 30%-ը (3 մլն դրամ) պետք է վճարեք Ձեր խնայողություններից, որպես **կանխավճարային գումար**:

Ապահովվածությունը վարկի գումարի չափը որոշող հիմնական գործոններից մեկն է:



D. Վարկի կանխավճարային գումարը՝ արդյոք պե՞տք է այն և ո՞ր դեպքերում

Վարկի որոշ տեսակների դեպքում, վարկատուի համար ցանկալի է, որ Դուք նույնպես ներդրում կատարեք և կանխավ լծարեք ձեռք բերվող գույքի արժեքի մի մասի դիմաց: Այդ գումարը հանդիսանում է կանխավճարը: Կանխավճարային գումարի չափը կարող է կազմել գնվող ապրանքի մինչև 50%:



Կանխավճարային գումարի մեծությունը, կարող է փոխել նաև վարկի գումարի մեծությունը և վճարման պայմանները: Սովորաբար, որքան մեծ է Ձեր կանխավճարային գումարը, այնքան մեծ կարող է լինել վարկի գումարը և փոքր՝ վարկի տոկոսն ու մարման ժամկետները:

Բանկերը կամ վարկային կազմակերպությունները կանխավճարային գումար պահանջում են վարկավորման գերակշիռ դեպքերում, սակայն առավել փոքր ծավալի և կարճաժամկետ վարկերի դեպքում (օրինակ՝ սպառողական վարկերի) կանխավճարային գումար կարող է չպահանջվել: Վարկատուն կանխավճար կարող է չպահանջել նաև այն դեպքերում, երբ վարկի գումարը էականորոն փոքր է գրավադրված գույքի արժեքից: Սակայն խոշոր վարկերի դեպքում՝ ինչպիսիք են հիփոթեքային վարկերը, մեքենայի և բարձրարժեք կենցաղային ապրանքների ձեռք բերման վարկերը, կանխավճարային գումարի առկայությունը հիմնականում պարտադիր է: Եվ ինչպես նշվեց նախորդ օրինակում, կանխավճարային գումարի մեծությունը կաջող է կախված լինել նաև այն գրավադրվող գույքի արժեքից, որը ցանկանում եք վարկով ձեռք բերել:

Կախված կանխավճարային գումարի մեծությունից, կարող են փափոխվել վարկի գումարի մեծությունը և վճարման պայմանները:

Օրինակ՝ 320.000 դրամ «մաքուր» և 82.500 դրամ «մաքուր տնօրինվող» եկամուտ ունեցող մեր նախորդ օրինակում բերված ընտանիքը ցանկանում է բնակարան գնել և կարող է վճարել 2.500.000 դրամ կանխավճար: Եթե բանկը պատրաստ է վարկ տրամադրել բնակարանի արժեքի 70%-ի չափով, և 12% տարեկան տոկոսադրույքով, ապա վարկառուն կարող է ակնկալել հետևյալ հնարավոր տարբերակները:

Աղյուսակ 2. Վարկի գումարի մեծությունը կախված մարման ժամկետից և կանխավճարային գումարի ծավալից՝ 12% տարեկան տոկոսադրույքի դեպքում

<i>Վարկի մարման ժամկետը, տարի</i>	<i>Վարկի և տոկոսադրույքի ամսական մարումները, ՀՀ դրամ</i>	<i>Հնարավոր վարկի գումարը, ՀՀ դրամ</i>	<i>Նվազագույն կանխավճարային գումարը, ՀՀ դրամ</i>	<i>Բնակարանի առավելագույն հնարավոր արժեքը, ՀՀ դրամ</i>
5	82.500	3.709.000	1.862.700	6.209.000
10	82.500	5.750.000	2.475.000	8.250.000
15	82.500	6.874.000	2.812.200	9.374.000

Աղյուսակից կարելի է նկատել, որ մեր կողմից դիտարկվող ընտանիքի համար, հաշվի առնելով առկա կանխավճարային գումարի մեծությունը և եկամուտների մակարդակը, առավել նպատակահարմար վարկի մեծությունը կկազմի **5.750.000 դրամ, 10 տարի ժամկետով**, որին գումարելով կանխավճարային գումարի մեծությունը (2.475.000 դրամ) կստանանք այն գումարը, որով նա կարող է ձեռք բերել բնակարան՝ **8.250.000 դրամ**:

Այսպիսով, ինչպես կարող ենք նկատել, ելնելով կանխավճարային գումարի մեծությունից, եկամուտների մակարդակից և գրավադրվող գույքի արժեքից կարելի է հաշվարկել այն գումարի մեծությունը, որը կարող է լինել Ձեր տնօրինության տակ բնակարան ձեռք բերելու համար: Սակայն, ինչպես կարող ենք նկատել, վարկի գումարի մեծությունը կախված է նաև վարկի մարման ժամկետից, ինչը ևս առանձին քննարկման կարիք ունի:



E. Ինչպե՞ս է վարկի ժամկետը որոշում վարկի գումարի չափը

Վարկի մարման ժամկետը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում վարկառուն մարում է վերցված վարկի մայր գումարը և վարկի տոկոսները: Կախված վարկի տեսակից վարկի մարման ժամկետը կարող է լինել սկսած մի քանի ամսից և մինչև 20 տարի տևողությամբ²: Սովորաբար, որքան մեծ է վարկի գումարը այնքան երկար է դրա մարման ժամկետը:

Վարկի ժամկետի որոշման համար կարևոր գործոն է վարկի մեծությունը և Ձեր վարկունակությունը: Սակայն վարկի ժամկետը կարող է սահմանափակվել նաև Ձեր կենսաթոշակային տարիքին հասնելու ժամանակահատվածով (կենսաթոշակային տարիքը 2011 թվականից սահմանվելու է 63 տարեկանը):

Եվ վերջապես, վարկի մարման ժամկետից է կախված այն տոկասադրույքը, որը բանկը կամ վարկային կազմակերպությունը կարող է Ձեզ առաջարկել: Այս դեպքում նույնպես, որքան երկար է վարկի մարման ժամկետը, այնքան ցածր է դրա դիմաց առաջարկվող տոկոսադրույքը:

Կախված վարկի տեսակից վարկի մարման ժամկետները կարող են տարբեր լինել...

Ներդիր 2. Վարկի արժույթը՝ դրամ, թե՞...

Հայաստանում օրինական վճարման միջոց հանդիսանում ՀՀ դրամը, վարկատուները կարող են նաև տրամադրել որոշ տեսակի վարկեր նաև այլ երկրների արժույթներով, մասնավորապես ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Վարկի արժույթի ընտրությունը շատ կարևոր խնդիր է, քանզի արտարժույթի փոխարժեքի տատանումները կարող են էականորեն կրճատել կամ մեծացնել մարման վճարների փաստացի մեծությունն ու դրա տեսակարար կշիռը Ձեր ընտանեկան բյուջեում:

Այդ իսկ պատճառով, առավել նպատակահարմար է վարկ վերցնել այն արժույթով, որով հաշվարկվում են Ձեր եկամուտները:

Եթե Ձեր վարկի և Ձեր եկամուտների արժույթները տարբեր են, ապա փոխարժեքների տատանումներից դուք կարող եք տուժել կամ շահել: Սակայն երկարաժամկետ վարկերի դեպքերում, երբ անհնար է կանխատեսել արժույթային փոփոխությունները, նպատակահարմար է վարկը վերցնել նույն արժույթով ինչ Ձեր եկամուտներն են:

5. Վարկի արժեքը՝ ինչպե՞ս այն գնահատել

Վարկը առաջին հերթին հարմարավետություն է և այդ հարմարավետության համար պետք է վճարել:

Վարկ վերցնելուց առաջ կարևոր է հաշվի առնել, թե որքան կարժենա այդ «հարմարավետությունը», և արդյոք կարող եք այդ գումարը Ձեզ թույլ տալ: Վարկի արժեքը հենց այն գումարն է, որը վարկառուն վճարում է վարկատուին վարկի «օգտագործման» դիմաց:

Վարկի արժեքը ձևավորվում է վարկի ստացման և մարման տարբեր փուլերում կատարվող հետևյալ վճարումներից՝

- վարկի ստացման համար ծախսվող գումարները,
- տարեկան տոկոսադրույքի վճարումները,
- վարկի սպասարկման համար կատարվող տարեկան վճարումները,
- այլ վճարումներ և ծախսեր:

Այս վճարումներն ու ծախսերը լավ հասկանալու և վարկի լավագույն, առավել մատչելի տարբերակը գտնելու համար անհրաժեշտ է իմանալ դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

² Այս ինֆորմացիան վերաբերվում է Հայաստանի տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերին 2008թ.-ի հունվար ամսվա դրությամբ:

A. Վարկի ստացման համար կատարվելիք ծախսերը և վճարները

Վարկի ստացման համար կատարվելիք ծախսերը կարող են զգալի մաս կազմել վարկի արժեքի ընդհանուր գումարում: Այս ծախսերն անխուսափելի են, սակայն դրանք հիմնականում միանվագ վճարվող գումարներ են:

Վարկի ստացման համար կատարվելիք ծախսերը կարող են զգալի գումար կազմել և ավելացնել ստացվող վարկի փաստացի արժեքը:

- Միանգամյա վճարման ծախսերից կարող են լինել
 - բանկի կողմից վարկի ստացման դիմումի դիտարկման համար կատարվելիք վճարումը,
 - գրավադրվող գույքի գնահատման ծախսերը,
 - ապահովագրության ծախսերը
 - պայմանագրի կնքման ծախսերը (նոտարական հաստատման պետական տուրք, սեփականության իրավունքի գրանցման պետական տուրք և այլն),
 - վարկային հաշվի բացման վճարներ և այլ ծախսեր:

Առանձին բանկեր կամ վարկային կազմակերպություններ կարող են նաև պահանջել **լրացուցիչ վճարներ**՝ վարկային հաշվի բացման և դրա վարման, վարկի տրամադրման, վարկի գումարի կանխկազմման և այլ բանկային գործառնությունների իրականացման համար:

B. Վարկի տարեկան տոկոսադրույքը

Վարկի տարեկան տոկոսադրույքն այն հիմնական գործոններից է, որից ելնելով վարկառուն կայացնում է վարկ վերցնելու մասին իր վերջնական որոշումը: Որքան ցածր լինի տարեկան տոկոսադրույքը, այնքան քիչ գումար Դուք կվճարեք վարկատուին՝ վակավորման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Վարկի տոկոսադրույքը սահմանվում է վարկատուի կողմից անհատականորեն յուրաքանչյուր վարկառուի համար:

Կախված վարկի տեսակից բանկը կամ վարկային կազմակերպությունը սահմանում է որոշակի տոկոսադրույքների միջակայք: Այդ միջակայքի սահմաններում էլ որոշվում է յուրաքանչյուր վարկառուի համար տոկոսադրույքի մեծությունը՝ ելնելով Ձեր վարկարժանությունից, վարկի ապահովվածությունից, վարկի կանխավճարային գումարի մեծությունից և վարկավորման ժամկետներից:



Վարկի տոկոսադրույքի 1%-ի տարբերությունը կարող է եական գումար կազմել ...

Օրինակ՝ ընդունենք, բանկը ավտոմեքենայի վարկավորման համար սահմանել է 12-15% տոկոսադրույքի միջակայք: Կախված վերը նշված գործոններից վարկատուն կարող է որոշել վարկը տրամադրել 12%, 13%, 14% կամ 15%-ով: Եթե Դուք ունեք բարեխիղճ վարկային պատմություն, վարկի կանխավճարային գումարը բավականին մեծ է (սովորաբար գնվող ավտոմեքենայի արժեքի 60%-ից ավելի) և վարկավորման ժամկետը բավականին երկար է (5 տարի), ապա ամենայն հավանականությամբ Ձեզ տրամադրվող վարկի տոկոսադրույքը կկազմի 12%: Ցանկացած դեպքում, Ձեզ համար առավել նպաստավոր կլինի վարկ վերցնել հնարավոր նվազագույն տոկոսադրույքով: Տարեկան տոկոսադրույքի 1%-ի տարբերությունն անգամ կարող է եականորեն մեծացնել Ձեր կողմից բանկին վճարվելիք գումարների մեծությունը, առավել ևս երկարաժամկետ վարկերի դեպքում: Ընդունենք, Դուք վերցրել եք **5 մլն. դրամի** վարկ, **5 տարի** մարման ժամկետով և **13%** տոկոսադրույքով, ապա ժամանակահատվածի վերջում միայն տոկոսավճարների ընդհանուր գումարը կկազմի **1.826.000 դրամ**, իսկ, եթե տոկոսադրույքը լիներ **12%**, ապա տոկոսավճարները կկազմեին **1.673.000 դրամ**: Այսինքն **1%-ի** տարբերության դեպքում տոկոսավճարների տարբերությունը կկազմի **153.000 դրամ**: Ընդ որում, որքան մեծ լինի վարկավորման ժամկետը, այնքան մեծ է լինելու այդ տարբերությունը:

Փոփոխական կամ լողացող տոկոսադրույքներ

Սովորաբար վարկի տոկոսադրույքը ֆիքսվում է վարկավորման ամբողջ ժամանակահատվածի համար, սակայն որոշ դեպքերում Ձեզ կարող են առաջարկվել նաև վարկի «լողացող» կամ փոփոխական տոկոսադրույքներ: Այս տոկոսադրույքները լայն տարածում չունեն Զայաստանում, սակայն որոշ բանկեր առաջարկում են վարկային փաթեթներ, որոնց տոկոսադրույքի մեծությունը սովորաբար «կապվում է» այլ տոկոսադրույքների հետ, օրինակ **ԿԲ հաշվարկային տոկոսադրույքի:**



Օրինակ՝ Դուք վերցրել եք **5 մլն. դրամի** վարկ, **5 տարի** մարման ժամկետով և **փոփոխական տոկոսադրույքով**, որը ֆիքսված է **ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի** նկատմամբ և վարկի ստացման պահին կազմել է **11%:** Ենթադրենք, վարկի ստացման պահից երկու տարի անց **ԿԲ-ը՝** ելնելով տնտեսական իրավիճակից, **1%-ով** իջեցնում է բանկային տոկոսի հաշվարկային դրույքը: Այդ պարագայում կիջնի նաև Ձեր կողմից վերցված վարկի տոկոսադրույքը: Եթե **ԿԲ-ը** չփոխի տոկոսադրույքը վարկավորման ժամկետի մնացյալ տարիների ընթացքում, ապա հաջորդ **3 տարիների** ընթացքում Դուք վարկը կմարեք **10%** տոկոսադրույքով, այսինքն կվճարեք առավել քիչ գումար: Սակայն, պետք է ի նկատի ունենալ, որ **ԿԲ-ը** կարող է նաև բարձրացնել բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, որի դեպքում Դուք ստիպված կլինեք մնացյալ տարիների համար վարկը մարել **12%** տոկոսադրույքով:

Այսպիսով, կախված տարեկան տոկոսադրույքի մեծությունից, վարկի դիմաց վճարվող տոկասավճարները կարող են էականորեն տարբերվել:

C. Վարկի սպասարկման վճարները

Բացի վարկի տարեկան տոկոսադրույքից բանկը կարող է սահմանել նաև վարկի սպասարկման տարեկան վճարներ: Այդպիսի դեպքերում վարկի մարման յուրաքանչյուր տարվա համար, բացի վարկի տոկոսադրույքից, Դուք վճարում եք նաև որոշակի գումար վարկի սպասարկման համար: Այդ գումարի մեծությունը հիմնականում կախված է լիում վարկի գումարի մեծությունից և վարկավորման ժամանակահատվածից: Միշտ հարցրեք վարկատուին, թե արդյոք նման վճար կա, և որքան է այն կազմում: Քանի որ, սպասարկման տարեկան վճարները կարող են զգալիորեն մեծացնել վարկի դիմաց տարեկան վճարվող ընդհանուր գումարը:

D. Իրական (համեմատական) տոկոսադրույք՝ ի՞նչ է այն և ինչպե՞ս հաշվել

Իմացեք թե ինչպես հաշվել վարկի իրական արժեքը:

Իրական (համեմատական) տոկոսադրույքը իրենից ներկայացնում է վարկատուին տարեկան (ամսեկան) վճարվող ընդհանուր գումարի և վարկի մայր գումարի հարաբերակցությունը տոկոսային արտահայտությամբ: Այսինքն, բացի վարկի տոկոսավճարից, այն հաշվի է առնում նաև բոլոր սպասարկման վճարները, որոնք Դուք վճարում եք բանկին կամ վարկային կազմակերպությանը վարկի մարման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

Ուշադիր եղե՛ք

Որոշ բանկեր կամ վարկային կազմակերպություններ՝ հաճախորդներ զրավելու նպատակով, սահմանում են բավականին ցածր տոկոսադրույքներ, միաժամանակ սահմանելով վարկի սպասարկման բարձր վճարներ: Այս դեպքում, եթե վարկի տոկասավճարի գումարին ավելացնում ենք սպասարկվան վճարը, ապա բանկին վճարվող տարեկան գումարը էականորեն մեծ է լինում այն գումարից, որը Դուք ակնկալում եք վճարել բանկի սահմանած տոկոսադրույքի դիմաց:

Իրական տոկոսադրույքը բացի վարկի տոկոսավճարից, հաշվի է առնում նաև բոլոր սպասարկման վճարները ...



Օրինակ՝ Դուք վերցրել եք **3 մլն. դրամի** վարկ, **4 տարի** մարման ժամկետով, **12%** տոկոսադրույքով և **60.000 դրամ** սպասարկման տարեկան վճարով (տես՝ Աղյուսակ 1): Միևնույն ժամանակ, երեք այլ վարկառուներ այլ բանկերից վերցրել են նույն **3 մլն. դրամի** վարկեր **4 տարի** ժամկետով, սակայն այլ տոկոսադրույքներով և սպասարկման տարեկան վճարներով: Այս դեպքում, Ձեր կողմից վճարվող, վարկի մարման ամսեկան ընդհանուր գումարը կկազմի **84.000 դրամ**, մինչդեռ մյուս վարկառուների համար (Վարկառու 2, Վարկառու 3 և Վարկառու 4) այդ գումարները ավելի փոքր կլինեն, ինչն ակնառու կերպով երևում է ներկայացվող աղյուսակից ևս:

Աղյուսակ 3. Վարկի իրական տոկոսադրույքը՝ կախված վարկի տոկոսադրույքից և սպասարկման տարեկան վճարի մեծությունից

Վարկառու	Ցրանկադրույթի վիճակ	Վարկի մարմանը, միլիոն ՀՀ դրամ	Վարկի ամսական մարումները, ներառյալ վարկի սպասարկման վճարը, ՀՀ դրամ	Ցրանկադրույթի միջին տոկոսադրույթ	Վարկի արժեքը, ՀՀ դրամ
Վարկառու 1	12%	60.000	84.000	15,3%	1.032.000
Վարկառու 2	12%	40.000	82.300	14,2%	952.000
Վարկառու 3	13%	30.000	83.000	14,7%	984.000
Վարկառու 4	14%	20.000	83.600	15,1%	1.015.000

Վարկի ամսական մարումների գումարից ելնելով, կարող ենք տեսնել, որ Ձեր կողմից վերցված վարկի **իրական (համեմատական) տոկոսադրույքը կկազմի 15,3%**, չնայած որ պայմանագրում նշված տոկոսադրույքը կազմում է ընդամենը 12%: Միևնույն ժամանակ, այն վարկառուները, որոնք վերցրել են վարկ ավելի բարձր տոկոսադրույքներով (Վարկառու 3 և Վարկառու 4), սակայն ցածր սպասարկման վճարով, վարկը մարում են առավել ցածր իրական տոկոսադրույքով (համապատասխանաբար 14,7% և 15,1%):

Ասպիտով, իրական տոկոսադրույքի հաշվի առնելը կարող է եական դեր խաղալ վարկի ընտրության գործում: Այդ իսկ պատճառով, այն երբեմն կոչում են համեմատական տոկոսադրույք, քանի որ այն հնարավորություն է տալիս համեմատել տարբեր բանկերի կողմից առաջարկվող վարկերը և կատարել ճիշտ ընտրություն:

Իրական տոկոսադրույքի հաշվի առնելը կարող է եական դեր խաղալ վարկի ընտրության գործում:

6. Վարկի մարման սխեմաներ. Ինչպե՞ս հաշվարկել և վճարել տոկոսավճարները

Վարկի մարման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում յուրաքանչյուր ամիս Դուք պետք է կատարեք մուծումներ՝ վարկի մայր գումարի և տոկոսների մարման համար: Վարկի տոկոսի հաշվարկը կատարվում է վարկի մնացորդի նկատմամբ, վարկի տրամադրման օրվանից՝ վարկային պայմանագրում նշված ժամկետներում: Սովորաբար, այդ մարումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա կտրվածքով՝ համաձայն վճարման ժամանակացույցի:

Գույություն ունեն վարկի մարման մուծումների հաշվարկման երկու հիմնական սխեմաներ՝ հավասարաչափ վճարումներով և մայր գումարի հավասարաչափ մարումներով:

Հավասարաչափ վճարումներով վարկի մարման սխեմայի դեպքում վարկի մարման ամբողջ ժամանակահատվածի համար յուրաքանչյուր ամիս Դուք կատարում եք միևնույն չափի վճարումներ: Այս դեպքում բավականին հեշտ է պլանավորել Ձեր ընտանեկան բյուջեն, քանի որ յուրաքանչյուր ամիս Դուք վճարում եք միևնույն մեծության գումար: Սակայն վճարման այս սխեմայի դեպքում ընդհանուր առմամբ վարկի մարման վերջնական գումարը ավելի մեծ է լինում, քան մայր գումարի հավասարաչափ մարումներով վճարման սխեմայի դեպքում:



Հավասարաչափ վճարումներով սխեմայի դեպքում յուրաքանչյուր ամիս Դուք կատարում եք միևնույն չափի վճարումներ, իսկ մայր գումարի հավասարաչափ մարումներով սխեմայի դեպքում՝ ամիսներին ամիսներին ավելանում է վարկի մարման ամիսների միջև:

Մայր գումարի հավասարաչափ մարումներով վճարման սխեմայի ընտրության դեպքում վարկի մարման վճարները ամիսներին ավելանում են բաշխվում վարկի մարման ամբողջ ժամանակահատվածի ամիսների միջև: Այս դեպքում մարման առաջին ամիսների ընթացքում մարման գումարը զգալիորեն մեծ է, սակայն աստիճանաբար նվազում է հաջորդ ամիսների ընթացքում:

Այժմ փորձենք ներկայացնել այս երկու սխեմաներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները կոնկրետ օրինակի վրա:

Օրինակ՝ Դուք ցանկանում եք վերցնել **1 մլն. դրամի** վարկ **1 տարի** մարման ժամկետով, **14%** տոկոսադրույքով և կարող եք ընտրել վարկի մարման երկու սխեմաներից մեկը՝ հավասարաչափ վճարումներով կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով: Առաջին դեպքում (տես՝ Աղյուսակ 4), Դուք մեկ տարվա ընթացքում, **յուրաքանչյուր ամիս կատարելու եք 89.787 դրամի** մարումներ (մայր գումարի և ամսական տոկոսների), ժամկետի վերջում ընդհանուր առմամբ վճարելով **1.077.445 դրամ**, որից **77.445 դրամը** կազմում է վարկի մարման տոկոսները:

Աղյուսակ 4. Վարկի մարման ժամանակացույցը՝ հավասարաչափ վճարումներով սխեմայի դեպքում

Վարկի մարման ամիսները	Մայր գումարի նվազող մնացորդը, ՀՀ դրամ	Մայր գումարի ամսական մարումները, ՀՀ դրամ	Տոկոսների ամսական մարումները, ՀՀ դրամ	Մայր գումարի և տոկոսների ամսական մարումները, ՀՀ դրամ
1	1.000.000	78.120	11.667	89.787
2	921.880	79.032	10.755	89.787
3	842.848	79.954	9.833	89.787
11	176.480	87.728	2.059	89.787
12	88.752	88.752	1.035	89.787
Ընդամենը	5.750.000	1.000.000	77.445	1.077.445

Երկրորդ դեպքում, (տես՝ Աղյուսակ 5), Դուք մեկ տարվա ընթացքում, յուրաքանչյուր ամիս կատարում եք տարբերակված վճարումներ (մայր գումարի և ամսական տոկոսների մարումները)՝ **առաջին ամսին** կատարելով **95.000 դրամի** վճարումներ, **երկրորդ ամսին՝ 94.028 դրամի**, այնուհետև հաջորդ ամիսների ընթացքում վճարվող գումարը աստիճանաբար նվազելով՝ **վերջին ամսին** կկազմի **84.306 դրամ**: Իսկ ժամկետի վերջում ընդհանուր առմամբ Դուք կվճարեք **1.075.883 դրամ**, որից **75.883 դրամը** կազմում է վարկի մարման տոկոսները: Ինչպես կարելի է նկատել, վարկի մարման այս սխեմայի դեպքում վճարումների ամբողջ գումարը **1.612 դրամով** պակաս է նախորդ սխեմայի վճարումների ընդհանուր գումարից:

Աղյուսակ 5. Վարկի մարման ժամանակացույցը՝ մայր գումարի հավասարաչափ մարումներով սխեմայի դեպքում

Վարկի մարման ամիսները	Մայր գումարի նվազող մնացորդը, ՀՀ դրամ	Մայր գումարի ամսական մարումները, ՀՀ դրամ	Տոկոսների ամսական մարումները, ՀՀ դրամ	Մայր գումարի և տոկոսների ամսական մարումները, ՀՀ դրամ
1	1.000.000	83.333	11.667	95.000
2	916.667	83.333	10.694	94.028
3	833.333	83.333	9.722	93.056
11	166.667	83.333	1.944	85.278
12	83.333	83.333	972	84.306
Ընդամենը	5.750.000	1.000.000	75.833	1.075.833

Այս օրինակում երկու սխեմաներով վարկի մարումների ընդհանուր գումարների տարբերությունը կազմեց բավականին փոքր գումար, սակայն վարկի մարման առավել մեծ ժամանակահատվածների համար այս տարբերությունը կազմում է էականորեն մեծ գումար:



Վարկի մարման սխեմայի ընտրությունը շատ կարևոր խնդիր է, քանզի դրանից է կախված Ձեր եկամուտների բաշխման և տնօրինման առանձնահատկությունները վարկի մարման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Հետևապես, եղեք ուշադիր և պարտադիր կերպով պահանջեք բանկից կամ վարկային կազմակերպությունից Ձեզ տրամադրել վարկի մարման ժամանակացույցը և յուրաքանչյուր ամսվա մարումների գումարների մեծությունը:

7. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ վարկ ստանալու համար

Վարկ վերցնելու համար անհրաժեշտ է բանկ կամ վարկային կազմակերպություն ներկայացնել որոշակի փաստաթղթեր, որոնց հիման վրա վարկատուն կգնահատի Ձեր վարկունակությունը և վարկարժանությունը: Պահանջվող փաստաթղթերի ցանկը կարող է տարբերվել կախված վարկի տեսակից և վարկատու կազմակերպության պահանջներից: Սակայն կան փաստաթղթեր, որոնք ընդհանուր են բոլոր դեպքերի համար:



Պահանջվող փաստաթղթերի ցանկը կարող է տարբերվել կախված վարկի տեսակից և վարկատու կազմակերպության պահանջներից:

Ֆիզիկական անձանց համար դրանք հիմնականում հետևյալներն են.

- անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և սոցիալական քարտ,
- տեղեկանք բնակության վայրից (3-րդ ձև)՝ տրված համատիրության կողմից,
- տեղեկանք եկամուտների վերաբերյալ (անհարժեշտության դեպքում նաև ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ) կախված եկամուտների աղբյուրից՝
 - աշխատավայրից՝ պարտադիր կերպով նշելով աշխատավայրի իրավաբանական լրիվ անունը, հասցեն և հեռախոսի համարները, ղեկավարի անունը և ազգանունը, աշխատանքային ստաժը, զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը,
 - գյուղատնտեսության մեջ զբաղված լինելու դեպքում՝ ունեցվածքի (բնակելի և/կամ ոչ բնակելի տան, հողատարածքի, տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի և այլնի) մասին տեղեկանք՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից,
 - փայաբաժինների և ստացվող դիվիդենդների մասին տեղեկանք՝ կենտրոնական դեպոզիտարիայից կամ պետռեգիստրից և ընկերությունից՝ հաստատված լիազոր անձի կողմից,
 - հիմնական աշխատավայր չունենալու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել եկամուտները հաստատող որևէ այլ փաստաթուղթ՝ կախված եկամտի աղբյուրներից,
- բանկային հաշիվների առկայության դեպքում դրանց շարժի քաղվածքը, ինչպես նաև այլ վարկեր ունենալու պայմաններում՝ դրանց մասին քաղվացքներ,
- ընտանեկան վիճակը հաստատող փաստաթղթեր՝ ամուսնության/ամուսնալուծության վկայական, համատեղ բնակվող և խնամակալության տակ գտնվող անձանց անձնագրերի կամ ծննդյան վկայականների պատճեններ,
- սեփականություն հանդիսացող անշարժ գույքի սեփականության վկայականներ և ավտոմեքենայի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր,

Ֆիզիկական և իրաբանական անձանց համար անհրաժեշտ է ներկայացնել տարբեր փաստաթղթեր:

- վարկի ապահովվածության առկայության դեպքում՝ ապահովություն հանդիսացող գրավի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր՝ սեփականության վկայականներ, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տրված տեղեկանք, նոտարական հաստատունով համաձայնություններ, տեխնիկական անձնագրեր, անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր, ինչպես նաև գրավադրվող գույքի գնահատման ակտ (անկախ գնահատողի կողմից) և գույքի ապահովագրության վկայական,
- երաշխիքի կամ երաշխավորության տրամադրման դեպքում՝ տրամադրող անձի (անհատի կամ կազմակերպության) վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև երաշխիք կամ երաշխավորություն տրամադրելու իրավասությունը հաստատող փաստաթղթեր,
- դիմում բանկի կամ վարկային կազմակերպության ղեկավարության անունով՝ նշելով վարկի նպատակը, գումարի մեծությունը, ժամկետը, ապահովվածության տեսակը և այլ անհրաժեշտ մանրամասներ:

Կախված վարկատու կազմակերպությունից և ստացվող վարկի նպատակից, պահանջվող փաստաթղթերի ցանկը կարող է լինել առավել երկար կամ ընդհակառակը պահանջվել առավել քիչ փաստաթղթեր:

Իրավաբանական անձանց կողմից վարկ վերցնելու համար հիմնականում կարող են պահանջվել հետևյալ փաստաթղթերը.

- գործարար ծրագիր (բիզնես պլան), պարտադիր նշելով՝ վարկի նպատակը, գործունեության արդյունքում սպասվող եկամուտներն ու ծախսերը, սպասվելիք շահույթի հաշվարկը, վարկի մարման աղբյուրները և ժամկետները,
- իրավաբանական անձի գրանցման պետքեզիտրի վկայականի պատճեն, ինչպես նաև գործադիր մարմնի և հիմնադիրների վերաբերյալ տեղեկանքներ,
- իրավաբանական անձի կանոնադրության պատճեն,
- իրավաբանական անձի ռեկվիզիտներ և հարկային կոդ (փաստաթղթի պատճեն),
- կազմակերպության իրավասու մարմնի (հիմնականում բաժնետերերի/մասնակիցների ընդհանուր ժողովի) որոշում վարկ ստանալու և գույքը գրավ դնելու վերաբերյալ,
- գրավադրվող անշարժ գույքի սեփականության վկայական, գույքի վերաբերյալ տեղեկանք անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից, ինչպես նաև գրավադրվող գույքի գնահատման ակտ (անկախ գնահատողի կողմից) և գույքի ապահովագրության վկայական,
- հաշվապահական հաշվետվությունների փաթեթ և հաշվեկշիռ,
- տեղեկանք հարկային տեսչությունից՝ հարկային և կենսաթոշակային վճարումների գծով պարտքերի վերաբերյալ,
- դիմում բանկի կամ վարկային կազմակերպության ղեկավարության անունով՝ նշելով վարկի նպատակը, գումարի մեծությունը, ժամկետը, ապահովվածության տեսակը և այլ անհրաժեշտ մանրամասներ:

Այս դեպքում ևս փաստաթղթերի ցանկը կախված է վարկատու կազմակերպությունից և ստացվող վարկի նպատակից:

Ներկայացվող փաստաթղթերի հիման վրա բանկը կամ վարկային կազմակերպությունը դիտարկում է Ձեր դիմումը և կայացնում համապատասխան որոշում՝ տրամադրել Ձեզ վարկ, թե ոչ: Որից հետո հետևում է վարկի պայմանների ճշգրտումը, համաձայնեցումը, վարկային պայմանագրի կազմումը և ստորագրումը:

Ներկայացված փաստաթղթերի հիման վրա վարկատու կազմակերպությունը դիտարկում է Ձեր դիմումը և կայացնում համապատասխան որոշում:

8. Ի՞նչ է վարկային պայմանագիրը և ինչպես այն կարդալ

Վարկային պայմանագրով բանկը կամ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով վարկ տրամադրել վարկառուին, իսկ վարկառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և հաշվարկված տոկոսները պայմանագրում նշված չափերով, պայմաններով և ժամկետներում: Վարկային պայմանագիրը պարտադիր կերպով պետք է կնքվի գրավոր: Գրավոր ձևի չպահպանման դեպքում վարկային պայմանագիրը անվավեր է:

Չիշեք, որ պայմանագիրը ստորագրելուց հետո, Դուք պետք է պարտադիր ստանաք վարկային պայմանագրի ստորագրված և կնքված Ձեր օրինակը:



Վարկային պայմանագիրը ստորագրելուց առաջ պարտադիր կերպով պետք է մանրամասնորեն կարդալ այն, ծանոթանալ բոլոր կետերին և, հարցերի ծագման դեպքում, ճշտել դրանք բանկի կամ վարկային կազմակերպության աշխատակիցների հետ:

Վարկային պայմանագրում հիմնականում ուշադրություն պետք է դարձնել այն կետերին, որտեղ նշվում են վարկավորման պայմանները: Մասնավորապես, հետևեք որպեսզի պայմանագրում պարտադիր կերպով լինեն հետևյալ նշումները՝

- վարկի գումարի մեծությունը և վարկի մարման ժամկետը,
- տարեկան տոկոսադրույքի չափը և դրա հաշվարկման կարգը (օրական կամ ամսական կտրվածքով), ինչպես նաև տոկոսադրույքի հնարավոր փոփոխությունների իրականացումը, դրանց կատարման կարգը և ժամկետները,
- վարկի մայր գումարի, տոկոսավճարների և այլ պարտադիր վճարների մարման գումարի մեծությունը և ժամկետները (մարման ժամանակացույցը),
- վարկի գումարի կամ տոկոսագումարների վճարումները չկատարելու կամ ուշացնելու դեպքում վարկատուի կողմից տույժերի, տուգանքների կիրառման կարգը և դրանց դեպքերի, չափերի և ժամկետների նկարագիրը,
- վարկի գումարի ժամանակից շուտ մարելու հնարավորության առկայությունը և այդ դեպքերում հնարավոր տույժերի և տուգանքների կիրառման կարգը, դրանց չափերը և ժամկետները,
- վարկառուի իրավունքների և պարտականությունների մանրամասն նկարագրությունը:

Իսկ այժմ մանրամասն անդրադառնանք Ձեր, որպես վարկառուի, իրավունքներին և պարտականություններին:

A. Որո՞նք են Ձեր իրավունքները որպես վարկառու

Դիտարկենք վարկառուի այն հիմնական իրավունքները, որոնք բխում են վարկային պայմանագրից.

- Յուրաքանչյուր վարկառու իրավունք ունի **ժամկետից շուտ մարել** վարկի ամբողջ մայր գումարը կամ դրա մի մասը: Հայկական որոշ բանկեր և վարկային կազմակերպություններ սահմանափակում են վարկը ժամանակից շուտ մարելու վարկառուի իրավունքները կամ ժամանակից շուտ մարելու դեպքում կիրառում են որոշակի տույժեր և տուգանքներ: Սակայն նոր ընդունվելիք օրենքը կարող է սահմանափակել ֆինանսական կազմակերպությունների գործողությունները՝ թույլատրելով վարկառուին վաղաժամ վարել վարկի մայր գումարը կամ դրա մի մասը, առանց որևէ տույժի և տուգանքի վճարման:

Վարկային պայմանագրում հիմնականում ուշադրություն պետք է դարձնել այն կետերին, որտեղ նշվում են վարկավորման պայմանները:

Ձեր հիմնական հիմնական իրավունքներն են՝ ժամկետից շուտ մարել վարկի գումարը, օգտագործել «մտածելու ժամանակը» և պահանջներ ներկայացնել

- Արդի պայմաններում հայկական բանկերի կամ վարկային կազմակերպությունների հետ վարկային պայմանագրի ստորագրումից հետո այն անմիջապես ստանում է իրավական ուժ և դրա նույնիսկ հաջորդ օրը դրա խզումը կապված է մեծ խնդիրների հետ: Սակայն շատ երկրներում գոյություն ունի այնպիսի հասկացություն ինչպիսին է «մտածելու ժամանակը», որի ընթացքում վարկառուն առանց որևիցե տույժերի և տուգանքների կարող է խզել վարկային պայմանագիրը այդ ընթացքում: Սովորաբար, մտածելու ժամանակը սահմանվում է օրենսդրությամբ և պայմանագրով՝ վարկային պայմանագրի ստորագրումից հետո 5-7 օր: Վարկառուների իրավունքների պաշտպանությանն ուղղված նոր օրենքում ևս նախատեսվում է սահմանել նմանատիպ ժամանակահատված:
- Յուրաքանչյուր վարկառու իրավունք ունի բանկին կամ վարկային կազմակերպությանը **պահանջներ ներկայացնել**՝ վարկատուի կողմից վարկային պայմանագրի ցանկացած կետի խախտման կամ ոչ բարեխիղճ կատարման դեպքում:

Այսպիսով, Դուք, լինելով վարկառու, իրավունք ունեք ՀՀ օրենքների և վարկային պայմանագրի շրջանակներում պաշտպանել Ձեր իրավունքները:

B. Պատրաստ եք կատարել Ձեր պարտականությունները

Վարկային պայմանագրի ստորագրումից հետո Դուք, որպես վարկառու, վերցնում եք Ձեզ վրա նաև որոշակի պարտականություններ, որոնք պետք է կատարել ժամանակին և պատշաճ կերպով:

Հիմնական պարտավորությունը, որը Դուք ստանձնում եք վարկային պայմանագիրը ստորագրելիս, դա վարկային պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան վարկի ամբողջ գումարի և տոկոսների մարումն է մինչև վարկավորման ժամկետի ավարտը: Եթե Դուք վարկի մարման ժամկետի ցանկացած պահին հրաժարվում եք կամ ի վիճակի չեք վճարել վարկի գումարը և դրա տոկոսները, ապա բանկը կարող է առանց դատարան դիմելու իրացնել վարկի ապահովվածությունը (գրավը) և ստացված համապատասխան միջոցներն ուղղել վարկի մարմանը: Իսկ եթե վարկավորման դեպքում առկա չէ վարկի ապահովվածություն, ապա բանկը կարող է դիմել դատարան՝ Ձեզ սնանկ ճանաչելու համար:

Հաջորդ պարտավորությունը, որը Դուք ստանձնում եք վարկային պայմանագիրը ստորագրելիս՝ վարկի մայր գումարի և դրա նվազող մնացորդի վրա հաշվարկված տոկոսների մարումն է: Սովորաբար այդ գումարի վճարումն իրականացվում է յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա կամ հաջորդ ամսվա առաջին աշխատանքային օրվա ընթացքում: Վարկային պայմանագրում պետք է կոնկրետ նշված լինի վճարումների կատարման ժամկետները: Մի մոռացեք կանոնանվոր մոտումներ կատարել, այլապես ուշացումների դեպքում բանկը իրավունք ունի Ձեր նկատմամբ կիրառել տույժեր և տուգանքներ: Այդ իսկ պատճառով, որպեսզի ստիպված չլինեք յուրաքանչյուր ամիս այցելել բանկ, նպատակահարմար է բանկին լիազորել յուրաքանչյուր ամիս վճարման օրը Ձեր բանկային հաշվից վարկային պայմանագրի սահմանված գումարների փոխանցում կատարել բանկի օգտին:

Վարկային պայմանագիր ստորագրելով Դուք նաև պարտավորվում եք վարկի գումարը նպատակային օգտագործել: Եթե դուք վերցրել եք վարկը բնակարան, ավտոմեքենա կամ այլ գույք գնելու համար, ապա բանկը վարկի տրամադրումից հետո կարող է պահանջել այդ գույքի գնման և նրա նկատմամբ Ձեր սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ:

Ընդհանուր առմամբ սրանք այն հիմնական պարտականություններն են, որոնք Դուք ստանձնում եք բանկից կամ վարկային կազմակերպությունից վարկ վերցնելիս:

Ձեր հիմնական պարտականությունն է վարկային պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան վարկի ամբողջ գումարի և տոկոսների մարումը մինչև վարկավորման ժամկետի ավարտը:

9. Վարկերի մարման որոշ առանձնահատկություններ

Վարկի մարումը ունի որոշակի առանձնահատկություններ, որոնց մասին տեղեկացված լինելը Ձեզ թույլ կտա խուսափել լրացուցիչ ծախսերից և նույնիսկ խնայել որոշակի գումար: Դիտարկենք վարկի մարման երկու առանձնահատկություն՝ ժամկետից շուտ (վաղաժամ) վարկի մարում և ժամկետանց վարկի մարում:

A. Կարելի՞ է արդյոք վաղաժամ մարել վարկը

Ժամանակակից պայմաններում բանկերի և վարկային կազմակերպությունների մեծամասնությունը հնարավորություն են տալիս վարկառուին ժամկետից շուտ մարել վարկը և, ինչպես արդեն նշել ենք, Դուք իրավունք ունեք օգտվել այդ հնարավորությունից: Վարկի կամ դրա մի մասի վաղաժամ մարումով Դուք կարող եք տնտեսել որոշակի գումար, որը պետք է վճարեիք վարկատուին տոկոսավճարների տեսքով, ինչպես նաև կրճատել վարկի մարման ժամկետը: Վարկի մի մասի վաղաժամ մարման դեպքում Դուք հնարավորություն եք ստանում կամ կրճատել ամենամսյա վճարների գումարի մեծությունը (առանց մարման ժամկետների փոփոխության), կամ չփոփոխելով մարման ամսական գումարի մեծությունը՝ կրճատել մարման ժամկետը:



Վարկի մի մասի վաղաժամ մարման դեպքում հնարավոր է կրճատել կամ ամենամսյա վճարների գումարի մեծությունը կամ մարման ժամկետը:

Օրինակ՝ Դուք վերցրել եք **5 մլն. դրամի** վարկ, **10 տարի** մարման ժամկետով **12%** տարեկան տոկոսադրույքով: Այս դեպքում Դուք յուրաքանչյուր ամիս կատարելով **41.670 դրամ** հավասարաչափ վճարումներ՝ ժամկետի վերջում բանկին վճարած լինեք ընդհանուր առմամբ **8.025.000 դրամ**, որից **3.025.000 դրամը** տոկոսավճարն է, իսկ 5 մլն. դրամը՝ Ձեր ստացած վարկի գումարը: Ենթադրենք, վարկի ստացման պահից մեկ տարի անց Դուք ամենամսյա վճարվելիք գումարին յուրաքանչյուր ամիս ավելացնում եք **3.000 դրամ**, այսինքն երկրորդ տարվանից սկսած յուրաքանչյուր ամիս վճարում եք **44.670 դրամ**: Այս դեպքում վարկի մարման փաստացի ժամկետի վերջում Ձեր կողմից բանկին վճարված տոկոսավճարների գումարը կկազմի **2.862.000 դրամ**: Այս պարագայում, Դուք ընդհանուր առմամբ կտնտեսեք **163.000 դրամ**, իսկ վարկավորման ժամկետը կկարճատեք **7 ամսով**:

Կամ դիտարկենք այլ հանգամանք, երբ Դուք կատարում եք միանվագ մեծ վճար վարկի մարման հինգերորդ տարվա վերջին, ընդունենք **250.000 դրամ**: Այս դեպքում, տոկոսավճարների ուղղությամբ Ձեր խնայած գումարը կկազմի **207.000 դրամ**, իսկ վարկավորման ժամկետը կկարճատեք **7 ամսով**:

Վարկի վաղաժամ մարումը ունի մեկ առավելություն ևս: Եթե Դուք ժամկետից շուտ մարում եք վարկը, ապա հնարավորություն եք ստանում չվճարել գրավադրվող գույքի ապահովագրական համապատասխան վճարը կամ ետ ստանալ ապահովագրական ընկերությունից ապահովագրական վճարի մի մասը:

B. Ի՞նչ է ժամկետանց վարկը և ինչպիսի՞ն են ժամկետանց վարկի մարման տոկոսադրույքերը

Վարկը և հաշվարկված տոկոսագումարները համարվում են ժամկետանց, եթե պայմանագրով նախատեսված ժամկետներում դրանք չեն մարվել Ձեր կողմից: Վարկը ժամկետանց համարվելու օրվանից դադարում է գործել վարկային պայմանագրի տոկոսադրույքը և սկսում է գործել տուգանային տոկոսադրույքը՝ հաշվարկվող ժամկետի խախտման օրվանից մինչև պարտավորության կատարման օրը, որի մեծությունը ևս պետք է սահմանված լինի վարկային պայմանագրով: Վարկի դիմաց հաշվարկված տոկոսավճարները ժամկետին չմարվելու դեպքում ևս բանկն իրավունք ունի կիրառել տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար՝ չվճարված գումարի որոշակի տոկոսի չափով (սովորաբար 0.1-0.2%), ինչը ևս պետք է սահմանված լինի վարկային պայմանագրով: Վարկային պայմանագրով նախատեսված առանձին




դեպքերում բանկը կարող է ըստ վարկային պայմանագրով սահմանված կարգի և պայմանների կիրառել նաև միանվագ տուգանք վարկի և/կամ տոկոսագումարի վճարման ցանկացած ուշացման համար:

Այս և այլ լրացուցիչ ծախսերից խուսափելու համար պետք է ստորագրելուց առաջ մանրամասն ուսումնասիրեք և համաձայնեցնեք պայմանագրի բոլոր դրույթները, ինչպես նաև կանոնավոր կերպով կատարեք պայմանագրով նախատեսված բոլոր վճարումները վերցված վարկի դիմաց:

10. Ի՞նչ է Ձեզ սպասում վարկի չմարման դեպքերում

Վարկ վերցնելով Դուք պարտավորվում եք կատարել վարկային պայմանագրով նախատեսված պարտականությունները: Եթե վարկի մարման ժամկետի ընթացքում փոխվում է Ձեր ֆինանսական վիճակը և դուք չեք կարող վճարել մայր գումարը և տոկոսավճարները, ապա Բանկի կամ վարկային կազմակերպության հետագա գործողությունները կախված կլինեն Ձեր անվճարունակության ժամկետների կանխատեսումներից:



Եթե Ձեր անվճարունակությունը կրում է կարճաժամկետ բնույթ (նոր աշխատանքի անցնելը, անսպասելի խոշոր ծախսերի ի հայտ գալը և այլն), ապա դիմելով բանկ, Դուք կարող եք ստանալ վճարումների հետաձգում, ինչը ձևակերպվում է որպես պայմանագրի հավելված:

Այն դեպքում, եթե Ձեր անվճարունակությունը կարող է լինել երկարատև, ապա բանկը կամ վարկային կազմակերպությունը կարող է առանց դատարան դիմելու իրացնել վարկի ապահովվածությունը (գրավը) և ստացված միջոցներն ուղղել վարկի մարմանը: Իսկ եթե վարկավորման դեպքում առկա չէ վարկի ապահովվածություն, ապա բանկը կարող է դիմել դատարան Ձեզ սնանկ ճանաչելու համար:

Սակայն անհրաժեշտ է հիշել, որ, ինչպես և Դուք, վարկատուն ևս շահագրգռված է վարկի գումարի և դրա տոկոսների վճարման համար: Հետևապես ցանկացած ֆինանսական դժվարության դեպքում անհրաժեշտ է դիմել վարկատուին և փորձել համատեղ գտնել ելք տվյալ վիճակից: Որոշ դեպքերում, եթե Ձեր անվճարունակությունը կարճ է տևելու կամ վարկի մարմանը մնացել է ոչ այնքան երկար ժամանակ, ապա բանկը կամ վարկային կազմակերպությունը կարող է Ձեզ առաջարկել վերավարկավորել Ձեր վարկը: Այս դեպքում վարկատուն կարող է ընթացիկ վարկի գումարի մարման համար Ձեզ տրամադրել լրացուցիչ վարկ՝ տրամադրվող վարկի մարման հետաձգումով:

Ցանկացած դեպքում նմանատիպ խնդիրների առաջացման դեպքում դիմեք վարկատուին և նա կառաջարկի Ձեզ հնարավոր տարբերակներ այդ խնդրի լուծման ուղղությամբ:

11. Ի՞նչ անել եթե Ձեզ մերժել են վարկավորել

Եթե Ձեզ մերժել են վարկ տրամադրել, ապա նախևառաջ անհրաժեշտ է պարզել դրա պատճառները, թեկուզև բանկը կամ վարկային կազմակերպությունը կարող է Ձեզ չներկայացնել մերժման պատճառները: Այնուհանդերձ, պահանջեք բանկից կամ վարկային կազմակերպությունից Ձեր մերժման գրավոր հաստատումը, որտեղ պետք է նշված լինեն մերժման պատճառները: Եթե մերժման պատճառները հիմնավոր են, այսինքն Ձեր եկամուտները բավարար չեն, կամ Ձեր վարկարժանությունը ցածր է, կամ էլ չունեք համապատասխան ապահովվածություն, ապա Դուք կարող եք քննարկել

Վարկի չմարման դեպքում վարկատուն կարող է առանց դատարան դիմելու իրացնել վարկի ապահովվածությունը (գրավը) և ստացված միջոցներն ուղղել վարկի մարմանը:

վարկատուի հետ այն պայմանները, որոնց առկայության ապահովման դեպքում վարկատուն համաձայն է դիտարկել Ձեր դիմումը ևս մեկ անգամ:

Եթե մերժման պատճառը Ձեր եկամուտների անբավարար լինելն է, ապա ներկայացրեք լրացուցիչ փաստաթղթեր այլ եկամուտների աղբյուրների մասին և/կամ համավարկառուի (ամուսինների) եկամուտների հաստատման փաստաթուղթ: Եթե Ձեզ մերժել են վատ վարկային պատմություն ունենալու կամ ընդհանրապես վարկային պատմություն չունենալու պատճառով, ապա փորձեք ձեռնարկել միջոցառումներ վարկային պատմության ստեղծման և բարելավման ուղղությամբ (տես՝ բաժին 4):

Եթե Ձեզ մերժել են վարկ տրամադրել, ապա պաշտպանելք Ձեր իրավունքները:

Եթե Ձեր կարծիքով բանկի կոմից վարկավորման մերժումը անարդարացի է և հիմնավորված չէ, ապա կարող եք դիմել ՀՀ Կենտրոնական բանկ, բանկերի միություն կամ սպառողների իրավունքների պաշտպանության կազմակերպություններին՝ նախապես խորհրդակցելով իրավաբանի հետ:

Այսպիսով, եթե Ձեզ մերժել են վարկ տրամադրել, ապա Դուք կարող եք փորձել վերացնել վարկի չտրամադրման պատճառները և/կամ պաշտպանել Ձեր իրավունքները:

12. Ինչպե՞ս ընտրել վարկատու կազմակերպություն և աշխատել նրա հետ

Վարկատու կազմակերպության ընտրությունը կարևոր խնդիր է, քանզի ընտրելով այն, Դուք վարկի ստացման և մարման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում աշխատելու եք այդ վարկատուի հետ: Հետաքար, որքան վստահելի է վարկատու կազմակերպությունը, որքան գրագետ և բարեխիղճ են նրա աշխատակիցները, այնքան հեշտ և հաճելի կլինի աշխատել նրա հետ: Ահավասիկ որոշ սկզբունքներ, որոնցով պետք է առաջնորդվել վարկատու կազմակերպություն ընտրելիս.



- **Բանկի կամ վարակին կազմակերպության մեծությունը:** Բանկի մեծությունը գնահատվում է նրա ֆինանսական միջոցների ծավալներով: Եթե վարկատու կազմակերպությունը ունի բավականին մեծ ֆինանսական միջոցներ, դա նշանակում է, որ այն ունի հաճախորդների բավականին մեծ թվաքանակ կամ խոշոր հաճախորդներ: Դրանից կարող եք եզրակացնել, որ բանկը վայելում է հասարակության որոշակի վստահությունը: Վարկատու կազմակերպության խոշոր լինելը կարող է նշանակել նաև, որ այն իր տրամադրության տակ ունի բավականին մեծ միջոցներ, հետևաբար կարող է վարկավորել ավելի երկար ժամանակահատվածով և ցածր տոկոսադրույքով:
- **Վարկատու կազմակերպության տեղեկատվական թափանցելիությունը:** Որքան թափանցիկ և հանրության համար բաց է աշխատում վարկատուն, այնքան մեծ վստահություն է այն վայելում: Ինչքան հեշտությամբ կարելի է գտնել այդ կազմակերպության, նրա կողմից մատուցվող ծառայությունների և դրանց պայմանների մասին Ձեզ հետաքրքրող ինֆորմացիան և ինչքան ամբողջական և մանրամասն ինֆորմացիա է տեղակայված այդ կազմակերպության ինտերնետային կայքում, այնքան վստահելի է այդ կազմակերպությունը:
- **Վարկատու կազմակերպության վարկանիշը:** ՀՀ ԿԲ-ը և որոշ ինֆորմացիոն գործակալություններ այժմ իրականացնում են բանկերի և վարկային կազմակերպությունների վարկանիշների սահմանում՝ ելնելով որոշակի սկզբունքներից: Այդ վարկանիշները հիմնականում գնահատում են բանկի կամ վարկային կազմակերպության կայունությունը, իրացվելիությունը, ինչպես նաև

Ֆինասական միջոցների կառավարման արդյունավետությունը և շահութաբերությունը:

- **Առաջարկվող պայմանները:** Յուրաքանչյուր վարկատու կազմակերպություն առաջարկում է վարկավորման իր պայմանները, որոնք կորող են էականորեն տարբերվել ըստ վարկի ժամկետայնության, պահանջվող կանխավճարի և գրավի մեծության, վարկի ստացման և սպասարկման ծախսերի և վճարների, տոկասադրույքների մեծության, մարման պայմանների և այլն: Հաշվի առնելով այս ամենը Դուք կարող եք ընտրել այն վարկատուին, որի պայմանները առավել ընդունելի կլինեն Ձեզ համար:
- **Ներկայացվող պահանջները:** Կախված վարկատու կազմակերպությունից կարող են տարբերվել նաև պահանջները վարկառուի նկատմամբ՝ եկամուտների մակարդակի, ապահովվածության առկայության և այլն: Այս հանգամանքները կարող են զգալի դեր խաղալ վարկատուի ընտրության հարցում, այնպես որ վարկատուի ընտրության ժամանակ մանրամասն ուսումնասիրեք նաև յուրաքանչյուր վարկատուի կողմից առաջարկվող պահանջները:

Վարկատու կազմակերպության ընտրությունը կարող եք կատարել նաև երկու փուլով: Նախ, վերը նշված առաջին երեք չափանիշների հիման վրա կարող եք ընտրել մի քանի առավել նախընտրելի կազմակերպություն, որից հետո Դուք կարող եք դիտարկել դրանց կողմից առաջարկվող վարկավորման պայմանները և պահանջները (տես՝ Հավելված B): Այս գործընթացը Ձեզ կօգնի առավել հիմնավորված կերպով ընտրել Ձեր հետագա նախընտրելի գործընկերոջը՝ վարկատուին:

Վարկատու կազմակերպության ընտրությանը հաջորդում է նրա հետ կապերի հաստատումը և բանակցությունների վարումը, իսկ վարկի տրամադրումից հետո՝ նաև կանոնավոր աշխատանքը վարկի մարման ամբողջ ընթացքում: Հետևաբար վարկատու կազմակերպությանը պետք է ընկալել, որպես Ձեր ապագա հնարավոր գործընկեր, որին Դուք դիմել եք աջակցության համար: Վարկատուն ինքը ևս շահագրգռված է, որպեսզի իր հաճախորդները լինեն գոհ և բավարարված: Այդ իսկ պատճառով ցանկացած խնդրի ծագման դեպքում դիմեք Ձեր վարկատուին և համատեղ ուժերով փորձեք գտնել ծագած խնդիրների լուծման լավագույն տարբերակները:

Այսպիսով, նշված սկզբունքները Ձեզ հնարավորություն կընձեռեն ընտրել Ձեզ համար նախընտրելի վարկային կազմակերպությունը և արդյունավետ աշխատել նրա հետ:

* * *

Հարգելի ընթերցող, հուսով եմք, որ այս հանրամատչելի ձեռնարկը Ձեզ օգնեց առավել մանրամասն տեղեկանալ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային ծառայությունների մասին և Դուք արդեն բավական տեղեկատվություն և գիտելիքներ ունեք վարկատուների ընտրության և նրանց հետ Ձեր հետագա գործունեությունը առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Խնդրում ենք միայն նկատի ունենալ, որ այս ձեռնարկում տեղ գտած տեղեկատվությունը համընդհանուր է, ունի խորհրդատվական բնույթ և չի կարող պարտադիր լինել որևէ կոնկրետ դեպքի համար: Այն կիրառելու համար խորհուրդ ենք տալիս խորհրդակցել նաև համապատասխան մասնագետների հետ:

Մաղթում ենք Ձեզ հաջողություն:

**Վարկատու
կազմակերպությունը
Ձեր վստահելի
գործընկերն է:**

Տերմիններ/Glossary

Վարկ – Վարկը դա բանկի կամ այլ վարկային կազմակերպության (վարկատուի) կողմից դրամական միջոցների (վարկի) տրամադրումն է փոխառուին (որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձ) պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով, որի դեպքում փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրա դիմաց:

Փոխառություն – փոխառուի կողմից փոխառուին դրամի կամ որոշակի այլ գույքի ժամանակավոր հանձնումն է, որի դեպքում փոխառուն պարտավորվում է փոխառուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխառուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք՝ վճարելով համապատասխան տոկոսավճար:

Փոխատու (վարկատու) – ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը տրամադրում է փոխառություն (վարկ):

Փոխառու (վարկառու) – ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը վերցրել է փոխառություն (վարկ):

Բանկային տոկոսի հաշվարկային դրույք – ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող և սահմանվող տոկոսադրույք, որը հաշվարկվում է իրավաբանական և ֆիզիկական անձանցից ՀՀ դրամով և արտարժույթով ներգրավված 30-360-օրյա ժամկետայնության ավանդների և ժամկետայնության վարկերի տոկոսադրույքների և ծավալների վերաբերյալ ՀՀ բանկերից ստացված տվյալների հիման վրա:

Վարկունակություն - փոխառուի ունակությունը սեփախան միջոցների հաշվին մարել վարկի գումարը:

Սպառողական գանձյուղ – մեկ անձի նորմալ կենսագործունեության ապահովման համար ամսեկան անհրաժեշտ պարենային և ոչ պարենային ապրանքների գումարային արժեքը:

Հաշվի ամսական միջին գումարային մնացորդ - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ տվյալ ամսվա ընթացքում հաշվի վրա եղած դրամական միջոցների օրական մնացորդների գումարի հարաբերակցությունը համապատասխան օրերի թվի վրա:

Վարկային պատմություն – ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից ստացված վարկերի և դրանց սպասարկման ուղղությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության ամբողջություն:

Վարկարժանություն – փոխառուի կողմից վարկի չվերադարձման հավանականության գնահատական, որը հաշվարկվում է փոխառուի վարկային պատմության հիման վրա:

Վարկային բյուրո – տեղեկատվական բանկ, որը հավաքագրում և մշակում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ստացված վարկերի և համապատասխան վարկառուների վերաբերյալ տեղեկություններ ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատություններից և իր անդամ վարկային կազմակերպությունների հայտերի հիման վրա տրամադրում է համապատասխան վարկային հաշվետվություններ իր տվյալների բազայում ներառված անձանց վերաբերյալ:

Գրավ – գրավը վարկառուի պարտականությունների կատարումն ապահովող միջոց է, որի դեպքում գրավով ապահովված պարտավորությունը վարկառուի կողմից չկատարելու դեպքում վարկատուն իրավունք ունի ստանալու գրավ դրված գույքի արժեքից՝ չվճարված գումարի չափով:

Կանխավճարային գումար – վարկի ատացման դեպքում այն նվազագույն գումարը, որը պետք է վարկառուն վճարի իր միջոցների հաշվեն՝ ստացվող վարկի օգնությամբ ձեռք բերվող գույքի համար:

Իրական (համեմատական) տոկոսադրույք – վարկատուին տարեկան (ամսեկան) վճարվող ընդհանուր գումարի և վարկի մայր գումարի հարաբերակցությունը տոկոսային արտահայտությամբ:

Հավելվածներ

A. 77 վարկատու կազմակերպությունների ցանկ

ՀՀ ԲԱՆԿԵՐ

77 Բանկեր	Հասցե	Հեռախոսահամար	Ինտերնետային կայք
«Անելիք բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Բաղրամյան 75	22 87 17, 22 82 80	www.anelik.am
«Առէկսիմբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Մ.Մկրտչյան 12	58-31-31, 56-22-58	www.areximbank.am
«Արդշինհիմնվեստբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Գ.Լուսավորիչ 13	52 85 13	www.ashib.am
«Արարատ բանկ» ԲԲԸ	ք. Երևան Պուշկինի 19	53 43 31	www.araratbank.am
«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Կիլյան 3	27 77 19, 27 77 29	www.artsakhbank.am
«Արմսվիսբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Խանջյան 13/ 2	52 95 93, 58 44 19	www.armswissbank.am
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Բայրոնի 1	56 85 85	www.acba.am
«Բիբլոս» ՓԲԸ	ք. Երևան, Ամիրյան 18/3	53 03 62	www.itb.am
«ԲՏԱ ինվեստ բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Վարդանանց 13	52 74 71, 54 74 51	www.bta.am
«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	ք. Երևան, Պարոնյան 21/1	59 14 00	www.armdb.com
«Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» ՓԲԸ	ք. Երևան, Տերյան 66	58 70 88	www.hsbc.am
«Ինեկոբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Թումանյան 17	56 37 25	www.inecobank.am
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Վ.Սարգսյան 26/1	54 54 52, 56 92 48	www.conversebank.am
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	ք. Երևան, Ամիրյան 23/1	56 33 32, 53 20 07	www.aeb.am
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Նալբանդյան 48	54 05 02, 52 39 29	www.armbusinessbank.am
«Հայմերարտբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Վ.Սարգսյան 2	58 99 06, 56 11 11	www.impexbank.am
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ	ք. Երևան, Նալբանդյան 46	58 04 51	www.vtb.am
"Մելլաթ բանկ" CJSC	ք. Երևան, Ամիրյան 6	58 17 91, 58 15 23	www.mellatbank.am
«Կասկադ բանկ» CJSC	ք. Երևան, Դեղատան 6	52 04 32, 52 05 93	www.cascadebanking.com
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ	ք. Երևան, Հանրապետության 44/ 2	56 20 36, 52 17 05	www.prometeybank.am
«Յունիբանկ» ՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 39	52 15 32	www.unibank.am

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>ՀՀ Վարկային կազմակերպություններ</i>	<i>Հասցե</i>	<i>Հեռախոսահամար</i>	<i>Ինտերնետային կայք</i>
«Էքսպրես կրեդիտ» ՓԲԸ	ք. Երևան, Չարենցի 58, բն.1	57 21 77	-
«Արֆին» ՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության 62	54 53 07	-
"ՍԵՖ Ինտերնեյշնլ ՈւՎԿ" ՍՊԸ	ք. Երևան, Քոչարի19/19	57 77 71, 57 50 55	-
«Գլաձոր» ՓԲԸ	ք. Երևան, Չարենցի 1բ	55 15 15	-
«Առաջին հիփոթեքային ընկերություն» ՍՊԸ	ք. Երևան, Ամիրյան 1	56 12 02	http://www.firstmortgage.am
«Իգմիրյան-Եվրագիա» ՍՊԸ	ք. Երևան, Տիգրան Մեծի 49	54 54 14	-
«Կասկադ կրեդիտ» ՓԲԸ	ք. Երևան, Հր. Քոչարի 5	27 87 76	http://www.cascredit.com
«Վաշինգտոն Քափիտալ» ՓԲԸ	ք. Երևան, Խորենացի 4	27 87 76	http://www.washingtoncapital.am
«Արեգակ» ՓԲԸ	ք. Երևան, Արամի 42/1	54 3 628	http://www.aregak.am
"ՖԻՆԿԱ" ՓԲԸ	ք. Երևան, Ագաթանգողեսի 2ա	52 27 12, 58 48 63	-
«Նոր հորիզոն» Universal Credit Organization Ltd.	ք. Երևան, Կոմիտաս 54	29 73 79; 29 73 80	-
"Նորվիկ" ՓԲԸ	ք. Երևան, Խանջյան 41, բն. 3,4,5	54 77 89	http://www.norvik.am
"Մալաթի" ՍՊԸ	ք. Երևան, Սեբաստիա 66	74 01 50; 74 01 90	-
«Գառնի ինվեստ» ՓԲԸ	ք. Երևան, Բաղրամյան 2, բն. 50	54 05 82; 56 25 73	-
"Էքսլենդիկ Եկեղեցական Փոխառվական Ֆոնդ" ՍՊԸ	ք. Էջմիածին, Բաղրամյան 2	51 71 58	-
«Բլեսս» ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիցների 9, բն. 70	54 79 49	-
"Ջի-Էֆ-Սի Ջեներալ Ֆայնենշլ Քրեդիթ Քոնփանի" ՓԲԸ	ք. Երևան, Խորենացի 28	54 68 88, 56 40 36	http://www.gfc.am

B. Վարկի տրամադրման պայմանների և պահանջների համեմատման աղյուսակ

Վարկի տրամադրման պայմանները և պահանջները	Վարկատու կազմակերպության անվանումը				
	«.....»	«.....»	«.....»	«.....»	«.....»
Վարկի նպատակը	_____				
Վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրվող՝ Ձեր նպատակին համապատասխան վարկի տեսակները					
Անհրաժեշտ գումարի մեծությունը	_____				
Վարկի գումարի սահմանափակումները՝ առավելագույն/նվազագույն					
Վարկի տրամադրման արժույթը					
Վարկի ապահովվածության անհրաժեշտությունը (այո/ոչ)					
Գրավադրվող գույքի գնահատման ծախսերի մեծությունը					
Գրավի առարկայի ապահովագրման անհրաժեշտությունը (այո/ոչ)					
Կանխավճարի մեծությունը (% վարկի գումարից)					
Վարկի տարեկան տոկոսադրույթը					
Վարկի տրամադրման և սպասարկման վճարները					
Վարկի մարման սխեման՝ հավասարաչափ վճարումներով կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով					
Վարկի վաղաժամ մարման դեպքում կիրառվող տույժերի և տուգանքների մեծությունը					
Վարկի մայր գումարի և տոկոսավճարների ուշացման դեպքում հաշվարկվող տույժերը և տուգանքները					
ՎԱՐԿԻ ՍՏԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ					
ՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՋԱՐԿԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱՎԿԱՆ					

Վարկատուների կողմից առաջարկվող վարկերի պայմանների և պահանջների համեմատության համար այս աղյուսակը կարող էք նաև օգտագործել որպեսզի գնահատեք նշված չափանիշների ընդունելիությունը, օրինակ 10 բալանոց սանդղակով (10 – առավելագույնս ընդունելի; 1 – անընդունելի) և հնարավոր լավագույն տարբերակը կլինի առավելագույն գումարային գնահատական ստացածը: